EASTERN PARTNERSHIP
CIVIL SOCIETY FORUM

Funded by
the European Union

ARMENIAN
NATIONAL PLATFORM
EASTERN PARTNERSHIP CIVIL SOCIETY FORUM

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԳՅՈՒՄՐԻ 2023

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ։ Բովանդակության համար պատասխանատվություն է կրում բացառապես հեղինակը՝ Ռաֆայել Մխիթարյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական Միության տեսակետները։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Մխիթարյան Ռ. Մ. Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի մեթոդական ձեռնարկ, Գյումրի, 2023 թ., 39 էջ:

Հանրային մոնիտորինգի սույն մեթոդական ձեռնարկում շարադրված են Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի համակարգը, մոնիտորինգի իրականացման մեթոդական գործիքներն ու մեխանիզմները, որոնք կաջակցեն բոլոր շահագրգիռ անձանց և կառույցներին, այդ թվում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, վերահսկողական և տեսչական մարմիններին, գիտաուսումնական հաստատություններին, ինչպես նաև նախաձեռնող խմբերին՝ Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացներում գործուն վերահսկողություն և մոնիտորինգ իրականացնելու նպատակով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… 5
2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ…… 7
   2.1 Սևանա լճի էկոհամակարգ …… 7
   2.2 Սևանա լճի էկոհամակարգի պահպանություն …… 7
   2.3 Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգ…… 7
3. ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՍՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՅԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ…… 8
4. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ……11
   4.1 Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի հասկացությունը…… 11
   4.2 Մոնիտորինգի նպատակը և խնդիրները…… 12
   4.3 Մոնիտորինգի օբյեկտը և առարկան…… 13
   4.4 Մոնիտորինգի աղբյուրները…… 16
   4.5. Տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործընթացներն ու մեթոդները……20
   4.6 Մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն իրականացնող սուբյեկտները……25
   4.7 Մոնիտորինգի հաշվետվության կառուցվածքը և բովանդակությունը……26
   4.8 Մոնիտորինգի կազմակերպման և անցկացման առաջարկություններ……28
5. ՀԱՎԵԼՎԱԾ. ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ….. 32
   5.1 Էկոհամակարգի պահպանման և օգտագործման տնտեսական և սոցիալական արդյունավետության գնահատումը…… 32
   5.2 Էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման մարմնի (*այդ թվում՝ կապալառու ձեռնարկության*) գործունեության արդյունքների գնահատումը…… 34
   5.3 Էկոլոգատնտեսական քաղաքականության նպատակների և սկզբունքների համապատասխանության որոշումը Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտում…… 35
   ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…… 37

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական ոլորտում *հանրային մոնիտորինգը* քաղաքացիական մասնակցության մեխանիզմ է, որը կոչված է տալու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, օգտագործման և կառավարման գործընթացների իրական վիճակի ամբողջական և ճշմարտացի պատկերը, նախատեսում է հիմնախնդիրների նկատմամբ համալիր մոտեցում, քաղաքական որոշումների կայացման և կառավարման նկատմամբ վերահսկողության շարունակական գործընթացներում օգտագործում է հանրային մասնակցության արդյունավետ և կիրառական ձևեր:

Բնապահպանական ոլորտում առկա փորձը սովորեցնում է, որ գրեթե բոլոր իրավիճակներում բնակչության և հանրային ներգրավվածության որակը կարող է նույնքան կարևոր լինել խնդիրների կառավարման առաջընթացի համար, որքան մասնագիտական լուծումների որակը: Հայաստանում առկա փորձը սովորեցնում է նաև, որ բոլոր խնդիրների լուծման և ռիսկերի կառավարման գործընթացներում, որոշումների մշակման և մոնիտորինգների իրականացման գործընթացներում կարիք կա հանրային մասնակցության նոր աստիճանի և մասնակցության նոր որակի ներդրման: Սևանա լճի խնդիրների հետ կապված որոշումներին շահագրգիռ կողմերի և հանրության մասնակցությունը էական նշանակություն ունի երկարաժամկետ, կայուն և կենսունակ լուծումներ ստանալու համար: Դա լուծում է բնօգտագործման և բնապահպանական կառավարման շուրջ սոցիալական կոնֆլիկտները և, միաժամանակ, էկոլոգիական կայունության առաջնահերթության խնդիրը:

Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտում հանրային մոնիտորինգի ուղենիշը էկոհամակարգի պահպանման գործընթացների արդյունավետության բարձրացումն է, էկոհամակարգի վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման ապահովումն է, դրա արտադրողականության բարձրացումն ու բնապահպանական, սոցիալական և տնտեսական ներուժի հզորացումն է:

Առաջարկվող ձեռնարկում ներկայացվող մոնիտորինգի համակարգը ուղղված է Սևանա լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պրակտիկայի ուսումնասիրությանը, այդ ոլորտի օրենսդրության առանձնահատկությունների ուսումնասիրությանը, մոնիտորինգի առարկաների և խնդիրների ուսումնասիրությանը, հնարավոր կոնկրետ դեպքերի յուրահատկությունների և առկա փաստերի ամբողջության ուսումնասիրությանը, որոնք խոչընդոտում են տվյալ ոլորտի օրենսդրության արդյունավետ կիրարկմանը: Ձեռնարկը նպատակ ունի և առավելապես կոչված է աջակցելու հանրային մոնիտորինգի գործընթացներում մասնակիցների վերլուծական կարողությունների զարգացմանը: Այն ապահովում է ուղեցույց,

գործիքներ ու մեթոդներ մոնիտորինգի գործընթացների նախագծման, նախապատրաստման և իրականացման համար:

Ձեռնարկն ունի հետևյալ կառուցվածքը:

1. Ներածություն

Ներածական մասը հակիրճ ներկայացնում է Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացներում հանրային մշտադիտարկման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ներածական մասին հաջորդում են հետևյալ բաժինները:

2. Հիմնական հասկացությունները

3. Ոլորտում և սույն ձեռնարկում օգտագործվող այլ հասկացություններն ու տերմինները

Ներկայացնում են Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտի, ինչպես նաև էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի վերաբերյալ տերմինների մեկնաբանություններ, ոլորտում կիրառվող այլ հասկացությունների և տերմինների բացատրություններ:

4. Էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի համակարգի նկարագրությունը, իրականացման մեթոդական մեխանիզմները

Ներկայացնում է էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի համակարգը, որը ներառում է էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի հասկացությունը, մոնիտորինգի նպատակը և խնդիրները, մոնիտորինգի օբյեկտը և առարկան, մոնիտորինգի աղբյուրները, տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործընթացներն ու մեթոդները, մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն իրականացնող սուբյեկտները, մոնիտորինգի հաշվետվության կառուցվածքը և բովանդակությունը, մոնիտորինգի կազմակերպման և անցկացման առաջարկություններ:

5. Հավելված. Էկոհամակարգի պահպանման և օգտագործման արդյունավետության գնահատման վերլուծական մեթոդներ

Ներկայացնում է Էկոհամակարգի պահպանման և օգտագործման արդյունավետության գնահատման գործնական մեթոդներ, որոնք իրենց մեջ ներառում են.

- էկոհամակարգի պահպանման և օգտագործման տնտեսական և սոցիալական արդյունավետության գնահատումը,
- էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման մարմնի (*այդ թվում՝ կապալառու ձեռնարկության*) գործունեության արդյունքների գնահատումը (*վերլուծական աղյուսակ*),
- էկոլոգատնտեսական քաղաքականության նպատակների և սկզբունքների համապատասխանության որոշումը Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտում (*աղյուսակ-ուղեցույց*):

Ձեռնարկում ներառված է նաև օգտագործված գրականության ցանկը:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Սևանա լճի էկոհամակարգ

Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի կենդանի ու անկենդան ենթահամակարգերը՝ նրանց միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների ամբողջականությամբ:

2.2 Սևանա լճի էկոհամակարգի պահպանություն

Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի կենդանի ու անկենդան ենթահամակարգերին վնաս պատճառող գործողությունների դեմ ուղղված համալիր միջոցառումների, ինչպես նաև Սևանա լճի էկոհամակարգի վերականգնմանը, վերարտադրմանը և, բնականոն զարգացմանը նպաստող համալիր միջոցառումների իրականացումն է:

2.3 Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգ

Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգը, հիմնականում, կամավորության սկզբունքով իրականացվող գործունեություն է, որին կարող են մասնակցել տարբեր հմտություններ, սոցիալական դերեր և հետաքրքրություններ ունեցող շահագրգիռ մարդիկ, օրինակ. տեղի բնակիչները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, տարբեր մակարդակների իշխանության կառույցների, վերահսկողական մարմինների, գիտական, ուսումնական և հասարակական կազմակերպությունների անդամները: Այդ գործունեությունը տեղեկատվության համակարգված հավաքումն ու վերլուծությունն է՝ ինչ-որ փոփոխություններ չափելու համար: Մոնիտորինգը ավելին է, քան մեկանգամյա գնահատումը. տեղեկատվությունը պետք է հավաքվի պարբերականորեն՝ մոնիտորինգի առարկայի առանձնահատկություններին համապատասխան հաճախականությամբ: Տեղեկատվությունը վերլուծվում է, արդյունքները գնահատվում և առաջ են մղվում որոշումներ կայացնելու գործընթացում օգտագործելու համար:

Սևանա լճի էկոհամակարգի պահպանման հանրային մոնիտորինգի «*դասական օրինակ*» կարող է համարվել այն շարունակական գործընթացը, երբ անմիջական ազդեցության գոտում գտնվող տեղական համայնքի բնօգտագործողները համակարգված կերպով գրանցում են լճի և ջրավազանային տարածքի վերաբերյալ տեղեկատվությունը, հետևում են փոփոխությունների ընթացքին, իրենց գործունեության ընթացքում անդրադառնում են այդ տեղեկատվությանը և ձեռնարկում վերահսկողություն և մասնակցություն Սևանա

լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման բնագավառներում իրականացվող գործընթացներին:

Մոնիտորինգի առարկաները կարող են ընդգրկել ամենատարբեր թեմաներ, սկսած դեպի լիճ հոսող ջրերի որակի, ափամերձ և ջրածածկվող տարածքների սանիտարական մաքրման խնդիրներից մինչև կառավարման մարմինների գործունեության թափանցիկություն և իրավանորմատիվային պահանջների կատարումը:

3. ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՍՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՅԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

- **Սևանա լճի ջրահավաք ավազան**՝ տարածք, որի մակերևութային և ստորերկրյա ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ: Սևանա լճի ջրահավաք ավազանի մաս են կազմում նաև Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, Արփա և Որոտան գետերի ջրահավաք ավազանները՝ մինչև Կեչուտի ջրամբար:
- **Սևանա լճի տնտեսական գործունեության գոտի**՝ Սևանա լճի ջրային և ցամաքային այն տարածքները, որոնց վրա տնտեսական գործունեության իրականացումն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով ներգործում է Սևանա լճի էկոհամակարգի վրա:
- **Սևանա լճի էկոտոն**՝ ջրային և ցամաքային էկոհամակարգերի փոխկապակցված անցումային գոտի, որը ներառում է ջրային ափամերձ և ցամաքային ջրամերձ տարածքները: Կախված ջրահավաք ավազանի ռելիեֆից՝ էկոտոնի սահմանները կարող են փոփոխվել մինչև 150 մետրի շրջանակներում:
- **Էկոլոգիական գոտիները.**
  1) Կենտրոնական գոտին «Սևան» ազգային պարկի տարածքն է, որի տարանջատման նպատակն է վերականգնել և պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական ու արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը: Կենտրոնական գոտու տարածքը համապատասխան ռեժիմով պահպանվող սահմանափակ տնտեսական և քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է:
  2) Անմիջական ազդեցության գոտին ընդգրկում է կենտրոնական գոտու սահմաններից դուրս գտնվող ջրահավաք ավազանը՝ մինչև ջրբաժան, որտեղ ցանկացած գործունեություն ուղղակի կամ անուղղակի ճանապարհով ազդում է Սևանա լճի, նրա մեջ թափվող գետերի հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական, հիդրոկենսաբանական,

սանիտարաթունաբանական, հիգիենիկ և այլ որակական ու քանակական ցուցանիշների վրա: Անմիջական ազդեցության գոտու տարածքը քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է:

3) Ոչ անմիջական ազդեցության գոտին Սևանա լճի ջրահավաք ավազանից դուրս գտնվող՝ լճի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ՀՀ տարածքն է: Ոչ անմիջական ազդեցության գոտու տարանջատման նպատակը Սևանա լճի վրա հնարավոր վնասակար ազդեցության կանխումն է: Ոչ անմիջական ազդեցության գոտում տնտեսական գործունեությունն իրականացվում է մթնոլորտ արտանետվող նյութերի սահմանային թույլատրելի նորմերին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

- **Ջրային մարմիններ՝** Հայաստանում ջրային մարմինները տարանջատվել են ըստ դրանց տեսակների բնութագրիչների (*համաձայն ջրային մարմինները գնահատելու համար Եվրոպական Միության կողմից կիրառվող «Ջրի շրջանակային դիրեկտիվ»-ի*): Տարանջատվել են մակերևութային (*գետեր, գետերի առանձին տեղամասեր, գետակներ, լճեր, լճերի առանձին տեղամասեր, ջրամբարներ և այլն*) և ստորերկրյա (*աղբյուրներ, հորատանցքեր, աղբյուր-հորատանցքեր, հանքային ջրային հորեր և այլն*) ջրային մարմիններ:
- **Էվտրոֆացում՝** ջրային մարմինների հագեցվածությունն է կենսածին տարրերով, որն ուղեկցվում է ջրային ավազանների կենսաբանական արտադրողականության բարձրացմամբ: Էվտրոֆացումը կարող է լինել ինչպես ջրամբարի «բնական ծերացման», այնպես էլ մարդածին ազդեցությունների արդյունք: Էվտրոֆացմանը նպաստող հիմնական քիմիական տարրերն են ֆոսֆորն ու ազոտը: Էվտրոֆիկ ջրային մարմինները բնութագրվում են հարուստ ափամերձ և ենթափնյա բուսականությամբ և առատ պլանկտոնով: Արհեստականորեն անհավասարակշիռ էվտրոֆացումը կարող է հանգեցնել ջրիմուռների արագ զարգացման (*ջուրը ծաղկում է*), թթվածնի պակասի, ձկների և կենդանիների մահվան: Այս գործընթացը կարելի է բացատրել ջրամբարի խորքերը արևի լույսի ցածր ներթափանցմամբ և, որպես հետևանք, հատակային բույսերում ֆոտոսինթեզի և թթվածնի բացակայությամբ:
- **Ջրի ծաղկում՝** քաղցրահամ ջրային էկոհամակարգերի վերին կենսահորիզոնում կանաչ և կապտականաչ ջրիմուռների զանգվածային բազմացում, որն առաջանում է բնական կամ մարդահարույց գործոնների ազդեցությամբ Ջրի «ծաղկմանը» նպաստում է կենսածին նյութերով (*ֆոսֆոր, ազոտ, օրգանական միացություններ*) ջրամբարների աղտոտումը, որի հետևանքով փոխվում են ջրի գույնը, որակը, խախտվում էկոհամակարգը, վատթարանում ջրավազանի թթվածնային ռեժիմը:

- **Լճային դիտանց** (*մոնիտորինգ*)՝ լճի, ավազանի և ավազանի ջրերի վիճակի կանխատեսման նպատակով իրականացվող դիտարկումների, հետազոտությունների և գնահատման գործընթաց:
- **Բնօգտագործող**՝ ֆիզիկական և իրավաբանական անձ, որն օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք է ձեռք բերել օգտվելու բնության օգտակար հատկություններից:
- **Կենսաբանական բազմազանություն**՝ ցամաքային, օդային և ջրային կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է ներտեսակային, միջտեսակային և էկոհամակարգերի բազմազանությունը:
- **Սևանա լճի ռեկրեացիոն անտառներ**՝ ռեկրեացիոն ֆունկցիա կատարող անտառներ, որոնց խմբի մեջ են ներառվում Սևանա լճի լճամերձ անտառները, անտառապուրակները, կանաչ գոտիները, ինչպես նաև այդ անտառների մեջ մտնող հանգստի գոտիները:
- **Անտառտնկարկ**՝ անտառային ծառատեսակների տնկիներով հիմնադրված արհեստական անտառ կամ անտառաշերտ, որն ունի անտառվերականգնողական, դաշտապաշտպան, հողապաշտպան, հողմապաշտպան, ռեկրեացիոն և այլ նշանակություն:
- **Կենսատոպ**՝ հատուկ պահպանության ենթակա բուսական ու կենդանական օրգանիզմների կենսամիջավայր:

Նկար 1. Ափամերձ լանդշաֆտ. Մեծ Սևան

4. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Առաջարկվող մոնիտորինգի համակարգը ուղղված է.

- Սևանա լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պրակտիկայի ուսումնասիրությանը,
- այդ ոլորտի օրենսդրության առանձնահատկությունների ուսումնասիրությանը,
- մոնիտորինգի առարկաների և խնդիրների ուսումնասիրությանը,
- հնարավոր կոնկրետ դեպքերի յուրահատկությունների և առկա փաստերի ամբողջության ուսումնասիրությանը, որոնք խոչընդոտում են տվյալ ոլորտի օրենսդրության արդյունավետ կիրարկմանը:

Մոնիտորինգի համակարգը ներառում է.

1) Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի հասկացությունը,
2) մոնիտորինգի նպատակը և խնդիրները,
3) մոնիտորինգի օբյեկտը և առարկան,
4) մոնիտորինգի աղբյուրները,
5) տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործընթացներն ու մեթոդները,
6) մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն իրականացնող սուբյեկտները,
7) մոնիտորինգի հաշվետվության կառուցվածքը և բովանդակությունը,
8) մոնիտորինգի կազմակերպման և անցկացման առաջարկություններ:

4.1 Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի հասկացությունը

Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգը իրենից ներկայացնում է ինքնուրույն, համակարգված և համալիր գործունեության տեսակ: Այն այնպիսի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տարբեր մակարդակների իշխանության կառույցների, վերահսկողական մարմինների, գիտական և հասարակական կազմակերպությունների համար է, որոնք կապ ունեն Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների արդյունավետության, կամ ոչ բավարար արդյունավետ լինելու պատճառների վերաբերյալ տվյալների հավաքման, ընդհանրացման և գնահատման, ինչպես նաև հայտնաբերված խնդիրների լուծման հիմնավորված առաջարկությունների պատրաստման հետ:

4.2 Մոնիտորինգի նպատակը և խնդիրները

4.2.1 Մոնիտորինգի շնորհիվ կապահովվեն հետևյալ *նպատակների իրագործումը*:

- Ստանալ հավաստի և հիմնավորված տվյալներ Սևանա լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման վերաբերյալ, որոնք խոչընդոտում են էկոհամակարգի պահպանման համակարգի արդյունավետ գործունեությանը:
- Բացահայտել օրինախախտումներ, որոնք թույլ են տրվում Սևանա լճի էկոհամակարգի պահպանման մասնակիցների (*իրավաբանական կամ ֆիզիկական անձինք*) կամ էկոհամակարգի պահպանման հետ առնչվող մասնակիցների կողմից:
- Այլ իրավական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և քաղաքական գործոնների բացահայտում, որոնք բացասական ազդեցություն են ունենում էկոհամակարգի պահպանման մասնակիցների գործունեության վրա, իրենց օրենսդրական պարտականությունների կատարման գործընթացում:
- Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտի օրենսդրության կիրարկման արդյունավետության բացահայտում և գործող օրենսդրության կարողունակության բացահայտում:
- Տեղեկատվության տրամադրում լայն հասարակությանը, զանգվածային լրատվամիջոցներին, համայնքային և հանրապետական իշխանություններին Սևանա լճի էկոհամակարգի պահպանման իրական գործընթացների և օրենսդրական պահանջների համապատասխանության վերաբերյալ:

4.2.2 Վերը շարադրված նպատակների իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ փոխկապակցված *խնդիրները*:

- Որոշել մոնիտորինգի օբյեկտը և առարկան:
- Միասնականացնել տեղեկատվության հավաքման և ընդհանրացման մոտեցումները, ապահովել նույնատիպ մոտեցում մոնիտորինգ իրականացնող բոլոր մասնակիցների շրջանում:
- Մշակել տեղեկատվության հավաքման, արձանագրման և գնահատման մեթոդներ:
- Պլանավորել Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացներին մասնակից մարմիններից, այդ թվում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ կառույցներից տեղեկատվության հավաքման ձևերն ու ժամկետները:
- Ձևավորել տվյալների միասնական բազա տեղեկությունների մուտքագրման համար: Սահմանել էկոհամակարգի պահպանման օրենսդրության

կիրառման կամ խախտումների վերաբերյալ տվյալների վերլուծության, արդյունքների ընդհանրացման կարգն ու ժամկետները:

- Կազմել մոնիտորինգի հաշվետվության կառուցվածքը, որը պատրաստվում է մոնիտորինգի արդյունքների հանրագումարի հիման վրա: Որոշել դրա հրապարակման կարգը և ձևակերպել այն պահանջները, որոնք վերաբերվում են հաշվետվության շարադրմանը և տպագրմանը:
- Իրականացնել հավաստի և ճշմարտացի տեղեկատվության հավաքագրում և ընդհանրացում Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտի ներկա իրական վիճակի մասին, և օրենսդրության հետ դրանց համապատասխանության վերաբերյալ:

4.3 Մոնիտորինգի օբյեկտը և առարկան

4.3.1 Մոնիտորինգի նպատակների իրականացման համար որպես *մոնիտորինգի առարկա* կարող են հանդիսանալ ոլորտում պատասխանատու բոլոր կառույցների *գործունեության պրակտիկան՝* կապված Սևանա լճի էկոհամակարգի պահպանման հետ (*կամ պահպանման առանձին բաղադրիչի հետ*), ներառյալ.

- էկոհամակարգի վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումը,
- էկոհամակարգի օգտագործումը,
- ջրային, անտառային մոնիտորինգը, ջրային մարմինների, անտառային տնկարկների բարելավումը, հաշվառումը, հաշվեկշիռը,
- էկոհամակարգի պահպանման գործընթացներում օրենսդրական պահանջների կատարումը, այդ թվում լճի մակարդակի էկոլոգիական նվազագույն նիշի ապահովման գործընթացները,
- թվարկված գործընթացների նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունը և այլն:

Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների մոնիտորինգի օբյեկտը իրենից ներկայացնում է հետևյալ երեք բաղադրիչների օրգանական միասնություն (*տես սխեմա 1-ը*):

Սխեմա 1. Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների մոնիտորինգի օբյեկտը



Մոնիտորինգի օբյեկտի վերը շարադրված հասկացությունը հանդիսանում է անհրաժեշտ պայման Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացներում առկա իրավիճակի մասին ամբողջական և վստահելի տեղեկատվության ստացման համար:

Այսինքն, վերը շարադրված երեք բաղադրիչների (*1. Էկոհամակարգի պահպանման պրակտիկայի, 2. առկա արդյունքների և 3. օրենսդրական նորմերի կատարման վրա ազդող գործոնների*) ամբողջության ուսումնասիրությունը միայն հնարավորություն կտա տեսնել և առանձնացնել այն պատճառները, որոնց առկայությունը խոչընդոտում է ոլորտի պատասխանատու կառույցների գործունեության արդյունավետությանը:

4.3.2 Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ ցանկացած այլ կառույցի կողմից այս ոլորտում իրականացվող մոնիտորինգը, կախված նպատակից և խնդիրներից, կարող է չպահանջել Սևանա լճի էկոհամակարգի պահպանման պրակտիկային առնչվող բոլոր կողմերի ուսումնասիրությունը: Որպես մոնիտորինգի անմիջական առարկա կարող է հանդես գալ, օրինակ, էկոհամակարգի պահպանման գործընթացներում օրենսդրության կատարման և օրինախախտումների մակարդակը ավազանում գտնվող մի որևէ կոնկրետ տարածաշրջանում, կամ անմիջական ազդեցության գոտում գտնվող որևէ համայնքի վարչական տարածքում:

Մոնիտորինգի առարկայի բերված օրինակների դեպքում հարկավոր է հիմնական շեշտը դնել էկոհամակարգի պահպանման և օգտագործման գործընթացներում առկա օրինախախտումների բացահայտման և դրանց դասակարգման վրա:

Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել առավել տարածված օրինախախտումներին, որոնք ոտնձգություն են էկոհամակարգի պահպանության նկատմամբ (*ջրառի օրենսդրորեն սահմանված քանակների գերազանցում, արտադրական և կենցաղային հոսքաջրերի և թափոնների չարտոնված կուտակումներ և ուղղորդում դեպի լիճ, ինքնակամ հողազավթումներ, ապօրինի անտառահատումներ, չարտոնված ձկնորսություն, ջրօգտագործում և արածեցումներ, ջրերի և հողերի աղտոտում, ափամերձ լանդշաֆտների աղճատում քաղաքաշինական միջոցառումներով, օրենսդրությամբ արգելված, էկոհամակարգին և կենսաբազմազանությանը վնաս պատճառող այլ գործողություններ*):

Ինչպես ցույց է տալիս փորձը, Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտում օրինախախտումները հիմնականում դրսևորվում են այնպիսի ձևերով, ինչպիսիք են.

- Սևանա լճի տնտեսական գործունեության գոտում ծրագրերի փորձաքննության գործընթացում տեղի բնակչության և անկախ փորձագետների կարծիքի արհամարումը,
- ջրառի, հողհատկացումների, շինարարական աշխատանքների թույլտվության, ձկնորսության, ծառահատման թույլտվությունների և էկոհամակարգի պահպանման հետ առնչվող այլ գործընթացներում հասարակության մասնակցության արհեստական սահմանափակումները,
- էկոհամակարգի պահպանմանը և այդ ոլորտում պատասխանատու մարմինների գործունեությանն առնչվող տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքների խախտումները,
- Սևանա լճի էկոլոգիապես անհրաժեշտ մակարդակի բարձրացում չապահովելը,
- Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի տարածքներում էկոլոգիապես մաքուր և անվտանգ տեխնոլոգիաների, այդ թվում՝ կենսատեխնոլոգիաների պարտադիր կիրառում չապահովելը,
- ավազանի ջրերի, հողերի աղտոտումը արտադրական և կենցաղային թափոններով և աղբով,
- ապօրինի ջրօգտագործումը և ձկնորսությունը,
- ռեկրեացիոն գոտում անտառային տնկարկների հատումները չհիմնավորված պատճառաբանությամբ,
- անտառային տարածքների հաշվին կապիտալ կառուցապատման անօրինական հողհատկացումները,
- ջրածածկվող տարածքներում մաքրման աշխատանքներ չիրականացնելը,
- կառավարման մարմինների և սպասարկող ընկերությունների ոչ թափանցիկ ֆինանսական գործունեությունը էկոհամակարգի պահպանման և օգտագործման գործընթացներում, խախտումները բյուջետային գործընթացներում՝ ծախսային հոդվածների ոչ հստակ և անորոշ

ձևակերպումը, ծախսերի հաստատված նախահաշիվ՝ բյուջե, ինչպես նաև բյուջեի հաշվետվություն չունենալը, պահպանման և պաշտպանության նպատակով դրամական միջոցներ չհատկացնելը,

- էկոհամակարգի պահպանման և օգտագործման նորմատիվային պարտադիր պահանջները չկատարելը,
- ջրերի, հողերի, անտառների պետական հաշվառում չիրականացնելը, պետական կադաստր չվարելը, էկոհամակարգի վերականգնման և վերարտադրման տարեկան հաշվառում չիրականացնելը,
- էկոհամակարգի պահպանման, օգտագործման և վերականգնման նկատմամբ գործուն վերահսկողություն չիրականացնելը,
- էկոհամակարգի պահպանման միջոցառումները բնապահպանական պահանջների և ժամկետների խախտումներով իրականացնելը կամ անգործությունը,
- էկոհամակարգին՝ Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի կենդանի ու անկենդան ենթահամակարգերին վնաս պատճառելու դիմաց պատասխանատվության չենթարկելը և այլն:

Օրինախախտումների և այլ երևույթների բացահայտման ընթացքում (*որոնք առնչվում են իրականացվող մոնիտորինգի առարկային*) անհրաժեշտ է ուսումնասիրել դրանք կոնկրետ այլ երևույթների և գործընթացների հետ կապի մեջ, որպեսզի հնարավոր լինի հասկանալ ուսումնասիրվող երևույթի ոչ միայն էությունն ու բովանդակությունը, այլ նաև դրան ծնող պատճառները, ինչպես նաև հնարավոր լինի հասկանալ այն գործոնները, որոնք կանխարգելում/խթանում են այդ երևույթը կամ դրա վրա ունենում են դրական/բացասական ազդեցություն:

4.4 Մոնիտորինգի աղբյուրները

4.4.1 *Մոնիտորինգի հնարավոր աղբյուրներ* կարող են հանդիսանալ համապատասխան նորմատիվային, իրավական, օրենսդրական ակտերը, գործառնական, վիճակագրական և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են մոնիտորինգի առարկային առնչվող անհրաժեշտ տվյալներ, այդ թվում.

- կառավարման մարմինների էկոհամակարգի պահպանման, , վերականգնման և օգտագործման պլանները,
- Սևանա լճի ավազանի տարածքային կառավարման մարմինների, անմիջական ազդեցության գոտում գտնվող տեղական ինքնակառավարման մարմինների, «Սևան» ազգային պարկի, Ջրային կոմիտեի, անտառտնտեսության տարածքային մարմնի գրանցամատյանները,
- անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը,
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների Սևանա լճի հետ առնչվող որոշումները,

- ոլորտի կառավարման և սպասարկման մարմինների, այդ թվում անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների, բյուջեները և բյուջեներին կից բացատրական ուղերձները, այդ բյուջեների հաշվետվությունները,
- ջրերի, հողերի, անտառների հաշվառման գրանցամատյանները, էկոհամակարգի վերականգնման տարեկան հաշվառման գրանցամատյանները,
- ավազանի և ափամերձ տարածքների բնական լանդշաֆտների տեսողական զննման հաշվետվությունները,
- էկոհամակարգի պահպանման և վերականգնման գործընթացներում ընդգրկված կապալառու ընկերությունների հաշվետվությունները,
- էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման ուղղությամբ կնքված պայմանագրերը, աշխատանքների կատարողական ակտերը, հանձնման-ընդունման արձանագրությունները,
- «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Սևանա լճի ամսական և տարեկան հաշվեկշիռները, ջրի որակի մոնիտորինգի արդյունքները,
- Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը,
- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը,
- «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքը,
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնարար դրույթների մասին» ՀՀ օրենքը,
- «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը,
- «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը,
- ՀՀ Ջրային օրենսգիրքը,
- «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի նորմերը՝ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի Սևանա լճի ջրերի որակի նորմերը». ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշումը,
- ՀՀ Հողային օրենսգիրքը,
- ՀՀ անտառային օրենսգիրքը,
- ՀՀ կառավարության որոշումը պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին,
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը,
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը,
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը,

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը,
- «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքը,
- ՀՀ Սահմանադրությունը,
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը,
- ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»,
- ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»,
- ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»,
- ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»,
- ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»,
- ՀՀ օրենքը «Լիցենզավորման մասին»,
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տեղեկատուն,
- ՀՀ կառավարության, նախարարությունների, մարզպետարանների, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական և միջազգային մասնագիտացված կառույցների և անհատ մասնագետների կողմից մշակված վերլուծական, հայեցակարգային և վիճակագրական նյութերը,
- Սևանա լճի էկոհամակարգին առնչվող գիտական ուսումնասիրությունների նյութերը,
- ոլորտին առնչվող միջազգային համաձայնագրերը և կոնվենցիաները, այդ թվում՝ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր» (*CEPA*) փաստաթուղթը,
- ԵՄ ակտեր և միջազգային գործիքներ, որոնց նկատմամբ Հայաստանը ստանձնել է պարտավորություն՝ համապատասխանեցնելու ՀՀ օրենսդրությունը: Ջրի որակի և ռեսուրսների կառավարման ոլորտում այդ պարտավորությունը ներառում է 5 դիրեկտիվներ.
    1) Ջրի շրջանակային դիրեկտիվը,
    2) Ջրհեղեղների դիրեկտիվը,
    3) Քաղաքային կոյուղաջրերի դիրեկտիվը,
    4) Խմելու ջրի դիրեկտիվը,
    5) Նիտրատների դիրեկտիվը:

Տեղեկություններ հնարավոր կլինի ստանալ ոլորտի մասնագետներից և մասնագիտացված ընկերություններից, գիտական և ուսումնական հաստատություններից, բնակչությունից, զանգվածային լրատվամիջոցներից, այդ թվում համացանցի հրապարակումներից, ամենատարբեր իրավական,

վերլուծական և այլ նշանակության փաստաթղթերից, բնապահպանական հասարակական կազմակերպությունների կայքէջերից, ազգային զեկույցներից, այլ աղբյուրներից:

Ոլորտի օրենսդրության կիրառմանը և խախտումներին առնչվող մոնիտորինգի ընթացքում անհրաժեշտ կլինի առաջնահերթ կարգով վերլուծության ենթարկել այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են.

- Սևանա լճի էկոհամակարգի պահպանմանն առնչվող համապատասխան որոշումները, որոնք ընդունվում են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից,
- դատական մարմինների որոշումները քաղաքացիական կամ վարչական գործերով, որոնք դիտարկվում են էկոհամակարգի պահպանման հետ առնչվող սուբյեկտների և այլ շահագրգիռ անձանց նախաձեռնությամբ,
- տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների հաշվետվությունները, այն մասով, որը վերաբերվում է էկոհամակարգի պահպանման օրենսդրության խախտումներին,
- հսկողություն-վերահսկողություն իրականացնող մարմինների կազմած արձանագրությունները հայտնաբերված խախտումների վերաբերյալ, ներառյալ դրանց վերացման համար հատկացված ժամկետները,
- դատախազական ստուգումների նյութեր, որոնք վերաբերվում են էկոհամակարգի պահպանմանն առնչվող կառույցների և պաշտոնատար անձանց օրինապահությանը,
- հասարակական կազմակերպությունների նյութեր, որոնք վերաբերվում են էկոհամակարգի պահպանման օրենսդրության պահանջների կատարմանը ոլորտում բոլոր դերակատարների և շահագրգիռ կողմերի, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների կողմից,
- բնակիչների դիմում-բողոքները, որոնք ուղղված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին օրենքի պահանջների խախտումների վերաբերյալ,
- քաղաքացիների, քաղաքացիական հասարակության և այլ կազմակերպությունների դիմումները, որոնք ուղղված են ՀՀ ազգային ժողովին, կառավարությանը, նախագահին, մարդու իրավունքների պաշտպանին և այլ պետական մարմիններին՝ իրենց իրավունքների խախտումների և այլ խախտումների վերաբերյալ, կապված էկոհամակարգի պահպանմանն առնչվող օրենսդրության պահանջների հետ,
- մոնիտորինգի առարկային վերաբերող հրապարակումներ, գիտական գրականության նյութեր,
- այլ իրավական նշանակության փաստաթղթեր, որոնք պարունակում են հավաստի տեղեկատվություն մոնիտորինգի առարկայի վերաբերյալ:

Էկոհամակարգի պահպանման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության ստացման հատուկ և միանգամայն կարևոր աղբյուր են հանդիսանում բնակիչների, էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման մարմինների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտի մասնագետների և ուրիշների շրջանում կատարված հարցումների արդյունքները, որոնք ստացվում են ստանդարտ հարցաթերթերի կամ ստանդարտ հարցազրույցների միջոցով:

4.4.2 Վերոհիշյալ գրավոր աղբյուրների ուսումնասիրության և վերլուծության ընթացքում ստացված տվյալները պարունակում են տեղեկատվություն տեղի ունեցած իրադարձությունների և գործընթացների մասին: Մինչդեռ, ոլորտում առկա մասնակիցների փոխհարաբերությունների հոգեբանական կողմը, որպես կանոն, անդրադարձ չի գտնում և անհայտ է մնում այն անձանց համար, ովքեր իրականացնում են մոնիտորինգը: Ընդ որում, էկոհամակարգի պահպանման մասնակիցների սեփական գնահատականները, գործելու շարժառիթները, գիտելիքները, զգացմունքները, որոնք հատուկ են նրանց միջև փոխհարաբերություններում, ունենում են ուղղակի ազդեցություն իրենց կամքի ձևավորման և կոնկրետ վարվելակերպի ու գործողության վրա:

Այդ պատճառով, ոլորտի մասնակիցների փոխհարաբերությունների հոգեբանության իմացությունը թույլ է տալիս անհրաժեշտորեն լրացնել և ճիշտ ընկալել այն տեղեկատվությունը, որը ստացվել է գրավոր աղբյուրներից:

Համապատասխանաբար, մոնիտորինգը, որը կողմնորոշված է ստանալու լիարժեք, բազմակողմանի և ճշմարտացի գիտելիքներ էկոհամակարգի պահպանման գործընթացների վերաբերյալ, չի կարող անցկացվել առանց ուսումնասիրվող ոլորտի հիմնական մասնակիցների հարցախույզի և հարցազրույցի անցկացման, նրանց գնահատականների, զգացմունքների, իրավական դիրքորոշման բացահայտման: Միայն բացառիկ դեպքերում է, որ թույլատրելի է մոնիտորինգը հիմնել սոսկ գրավոր աղբյուրների վրա, ընդ որում միանգամայն հասկանալի է, որ այն ի սկզբանե դատապարտված է ոչ ամբողջական ուսումնասիրություն լինելուն և հետազոտության հանրագումարի արդյունքում ձևավորված եզրակացությունների և առաջարկությունների որոշակի միակողմանիության:

4.5. Տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործընթացներն ու մեթոդները

4.5.1 Մոնիտորինգի առարկայի վերաբերյալ հավաստի և ամբողջական տեղեկատվությունը հնարավոր է ստանալ այն գործընթացների օգնությամբ, որոնք մշակվել են գիտական սոցիոլոգիայի միջոցով, փորձահավաստի տեղեկատվության հավաքման և ընդհանրացման համար:

Մոնիտորինգի ընթացքում անհրաժեշտ է օգտագործել հետևյալ տեսականորեն և գործնական եղանակով հիմնավորված գործընթացները.

1) աղբյուրների ձեռքբերում, որոնք պարունակում են մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվություն. գրավոր փաստաթղթեր կամ ստանդարտ հարցաթերթեր, որոնք լրացված են էկոհամակարգի պահպանման գործընթացների մասնակիցների կողմից հարցախույզի կամ հարցազրույցի ընթացքում,
2) աղբյուրների վերլուծություն այնպիսի փաստերի բացահայտման նպատակով, որոնք համապատասխանում են մոնիտորինգի առարկային,
3) բացահայտված փաստերի, երևույթների արձանագրում,
4) կապերի և փոխկապակցված փաստերի, երևույթների և դրանց հետ կապված այլ երևույթների և գործընթացների բացահայտում,
5) բացահայտված փաստերի, երևույթների ի հայտ գալու և գործելու պատճառների բացատրություն,
6) բացահայտված փաստերի, երևույթների ընդհանրացում՝ ընդհանուր օրինաչափությունների, էկոհամակարգի պահպանման գործընթացների պրակտիկան բնութագրող հատկանիշների բացահայտման նպատակով (*լինի դա որևէ էկոլոգիական գոտու կամ ենթագոտու, տնտեսական գործունեության գոտու կամ ենթագոտու մասշտաբով, առանձին տարածաշրջանի, անմիջական ազդեցության գոտում գտնվող առանձին համայնքի կամ բնակավայրի, «Սևան» ազգային պարկի կամ անտառտնտեսության տարածքային մասնաճյուղի սպասարկման տակ գտնվող տարածքի, էկոհամակարգի պահպանման և օգտագործման որևէ կապալառու կազմակերպության ենթակայության տիրույթի, կամ թե Սևանա լճի ամբողջ ջրահավաք ավազանի և ոչ անմիջական ազդեցության գոտու մասշտաբով*),
7) էկոհամակարգի պահպանման գործընթացների կատարելագործման առաջարկությունների և դրանց իրականացման կոնկրետ քայլերի մշակում,
8) զեկույցի տեքստի պատրաստում, որը առարկայացնում է իրականացված մոնիտորինգի հիմնական արդյունքները:

4.5.2 Հատուկ կարևորություն ունի գրավոր աղբյուրների վերլուծությունը, որն իրականացվում է մոնիտորինգի առարկայի վերաբերյալ ճշմարտացի տեղեկատվության բացահայտման նպատակով: Այդ խնդրի հաջող լուծումը պարտադիր պայման է հանդիսանում ստացված տեղեկատվության վերլուծության և մոնիտորինգի արդյունքների զեկույցի պատրաստման հետագա ամբողջ գործունեության հաջողության համար: Միայն ամբողջական և ճշմարտացի տեղեկատվության տիրապետելով կարելի է հույս ունենալ ստանալու օբյեկտիվ եզրակացություններ և առաջարկություններ, որոնք թույլ կտան ոչ միայն պարզել էկոհամակարգի պահպանման գործընթացների իրական վիճակը, այլ նաև

պատրաստել գիտականորեն հիմնավորված և գործուն առաջարկություններ այդ գործընթացների կատարելագործման նպատակով և մշակել դրանց իրականացման գործնական քայլեր, ինչպես նաև միջոցառումների ծրագիր՝ ոլորտում ՀՀ օրենսդրության և իրավունքի գերակայության հաստատման ուղղությամբ:

Գրավոր աղբյուրների վերլուծության գործընթացներում առաջարկվում է առաջնահերթ ուշադրություն դարձնել գրավոր աղբյուրների իսկության և այն ապացույցների ամբողջության վրա, որոնք վկայում են աղբյուրում նկարագրվող փաստի, երևույթի հավաստիությունը: Պետք է նաև պարզել հետազոտվող իրադարձությունների, երևույթների բոլոր բաղադրիչները, այդ թվում՝ որոշել, թե ով է հանդիսացել գործունեության սուբյեկտ, պարզել գործունեության նպատակները, եղանակները և արդյունքները, կատարվածի իրավաբանական բնութագիրը՝ իրականացված գործողությունները օրինական են, թե օրինախախտում են:

Հարկ է տալ երևույթի իրավաբանական որակավորումը և որոշել թե բացահայտված փաստերն ու երևույթները էկոհամակարգի պահպանմանն առնչվող օրենսդրության կոնկրետ որ նորմերի սահմաններում են գտնվում:

4.5.3 Մոնիտորինգին մասնակից բոլոր մասնագետների գործունեության միասնականացման համար նպատակահարմար է պատրաստել էկոհամակարգի պահպանման գործընթացների վիճակի մասին «*Նյութերի հավաքման, ընդհանրացման և վերլուծության մեթոդական առաջարկներ*», որոնցում նպատակահարմար է ընդգրկել հետևյալ հարցերը.

- էկոհամակարգի պահպանման գործընթացների վիճակի մասին նյութերի հավաքման և ընդհանրացման վերաբերյալ գործունեության իրավական հիմքերը,
- որոշել այն խնդիրները, որոնք կարող են լուծում ստանալ մեթոդական առաջարկների օգնությամբ,
- սահմանել հիմնական տերմիններն ու հասկացությունները, որոնք չունեն միանշանակ բովանդակություն, բնութագրվում են հոմանիշներով կամ նույնանուն բառերով,
- շարադրել մոնիտորինգի առարկային առնչվող տեղեկատվության հավաքման սկզբունքներն ու փուլերը,
- որոշել այն սուբյեկտների շրջանակը, որոնք իրավասու են մասնակցել մոնիտորինգի իրականացմանը,
- որոշել մոնիտորինգի առարկան և այն գրավոր աղբյուրների ամբողջությունը, որոնք պարունակում են տեղեկություններ մոնիտորինգի առարկայի վերաբերյալ,

- առաջարկել այն հիմնական գործընթացները, որոնք անհրաժեշտ են անցկացնել մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրության և ընդհանրացման համար,
- առաջարկել բացահայտված տվյալների, դրանց ընդհանրացման նկարագրության միասնական ձևեր, մոնիտորինգի իրականացման և մոնիտորինգի արդյունքների հիման վրա վերլուծական տեղեկանքի պատրաստման ժամկետները:

4.5.4 Հարցաթերթի պատրաստում էկոհամակարգի պահպանման գործընթացների վերաբերյալ կարծիքների ուսումնասիրության համար, որը կհամապատասխանի ժամանակակից սոցիոլոգիայի պահանջներին, ինչպես նաև մոնիտորինգի առարկայի յուրահատկություններին:

Մոնիտորինգի անցկացման ընթացքում անհրաժեշտ է ստեղծագործաբար և մեթոդաբանորեն ճիշտ օգտագործել տեղեկատվության հավաքման և ընդհանրացման հատուկ և մասնավոր մեթոդների ամբողջ համակարգը, այդ թվում.

- *իրավունքի մեկնաբանման մեթոդը՝* ՀՀ օրենսդրությամբ, այլ նորմատիվաիրավական ակտերով սահմանված նորմատիվային դրույթների էության և բովանդակության պարզաբանման նպատակով,
- *գրավոր աղբյուրների, փաստաթղթերի վերլուծության մեթոդները*, որոնք թույլ են տալիս մոնիտորինգի առարկայի վերաբերյալ հավաստի տեղեկությունները տարբերել այն տեղեկություններից, որոնք բավարար չափով հավաստի չեն կամ ընդհանրապես կասկածելի են,
- *հարցաթերթավորման մեթոդները*, որոնք թույլ են տալիս ստանալ հավաստի տեղեկություններ էկոհամակարգի պահպանման գործընթացների մասնակիցների հոգեբանական գործոնների, գնահատականների, կարծիքների, իրավական պատկերացումների և գոյություն ունեցող օրենսդրության իրենց սեփական գնահատականի և օրենքի կիրառման փորձի մասին,
- *անմիջական դիտարկման մեթոդները*, մոնիտորինգին մասնակցող համապատասխան մասնագետին էկոհամակարգի պահպանման գործընթացներում անմիջականորեն ներառելը, որը ապահովում է դիտարկվող գործընթացների և երևույթների վերաբերյալ հավաստի տեղեկությունների ստացում,
- *փորձագիտական հարցումների մեթոդները՝* մոնիտորինգի առարկային վերաբերվող հարցումներ էկոհամակարգի պահպանման ոլորտի բարձրակարգ մասնագետների շրջանում,
- *համեմատական վերլուծության մեթոդները*, որոնք հավաստի տեղեկություններ են ապահովում հետազոտվող երևույթի, գործընթացների նույնատիպ կամ առանձնահատուկ հատկանիշների մասին,

- *սոցիալ-իրավական տեղեկատվության վիճակագրական վերլուծության մեթոդները*, որոնք թույլ են տալիս ընդհանրացնել ստացված տեղեկատվությունը, որոշել համակարգման սկզբունքը, հաստատել համահարաբերակցական և այլ կապեր ուսումնասիրվող երևույթների և գործընթացների միջև:

4.5.5 Մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկությունների հավաքման և ընդհանրացման բազմաբովանդակ գործունեության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել գիտական հետազոտության հետևյալ ընդհանուր մեթոդաբանական սկզբունքներով.

- *պարբերականության սկզբունքով՝* էկոհամակարգի պահպանման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և ընդհանրացման աշխատանքների անընդհատության և որոշակի շրջափուլերի պահպանումը,
- *տեղեկատվության հավաքման և ընդհանրացման գործողությունների պլանային լինելու սկզբունքով՝* ինչը ենթադրում է պլանավորված գործընթացների հաշվառում, օրինակ՝ էկոհամակարգի պահպանման գործընթացներում հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների՝ պետական տեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, «Սևան» ազգային պարկի գործունեության ներքին ռեժիմի հաշվառում (*օրինակ. լճից ջրառի, ձկնորսության կամ անտառային տնկարկների խնամքի տարեկան ցիկլերի, ջրածածկվող տարածքների մաքրման, կամ ջրահավաք ավազանում ծառատնկման ժամանակաշրջանների հաշվառում և այլն*), ինչպես նաև էկոհամակարգի պահպանման գործընթացների ստուգումների անցկացման պլանավորման հաշվառում,
- *տեղեկատվության բոլոր օրինական (թույլատրելի) աղբյուրների, գրավոր փաստաթղթերի օգտագործման սկզբունքով*,
- *գրավոր աղբյուրներում և այլ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիության ստուգման սկզբունքով*,
- *ուսումնասիրության համալիր լինելու սկզբունքով*, այդ թվում տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրման և ընդհանրացման գործընթացում,
- *պետական գաղտնիքի պահպանման և գաղտնի տեղեկատվության պահպանման սկզբունքով՝* համաձայն օրենսդրորեն սահմանված երաշխիքների,
- *հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների, այլ իրավապաշտպան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից էկոհամակարգի պահպանման գործընթացներում իրավախախտումների*

մասին տեղեկատվության հետ աշխատանքում կեղծիքների անթույլատրելիության սկզբունքով:

4.6 Մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն իրականացնող սուբյեկտները

4.6.1 Մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և ուսումնասիրության համար հնարավոր ներգրավված կազմակերպություններն են՝ տարբեր մակարդակի իշխանության մարմինները, էկոհամակարգի պահպանման ոլորտում պատասխանատու կառույցները, պետական վերահսկողական ծառայությունները, գիտաուսումնական հաստատությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այդ թվում. հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվամիջոցները և այլն:

Էկոհամակարգի պահպանման գործընթացների մոնիտորինգի և վերահսկողության գործունեությունը անմիջականորեն կապված է շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների բանական օգտագործման սահմանադրական պահանջի իրականացման հետ, հետևաբար, որպես այդ գործունեության իրականացման իրավական հիմք ծառայում է ՀՀ Սահմանադրությունը, օրենսդրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային համաձայնագրերն ու կոնվենցիաները, որոնք ամրագրում են նաև տեղեկատվության մատչելիության, հանրային իրազեկման, թափանցիկության, հանրային մասնակցության ժողովրդավարական սկզբունքները:

Մոնիտորինգ իրականացնող կազմակերպությունները կարող են ներգրավել հասարակայնության ներկայացուցիչների (*կամավորության կամ փոխհատուցման սկզբունքներով*), այդ թվում.

- բնապահպանական հարցերով հանրային խորհուրդների ներկայացուցիչների,
- էկոհամակարգի պահպանման ոլորտի և այդ ոլորտի քաղաքականության մասնագետ վերլուծաբանների,
- Ազգային ժողովի պատգամավորների,
- համայնքների ավագանու անդամների,
- վերահսկողական և տեսչական մարմինների ներկայացուցիչների,
- հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների,
- տվյալ տարածաշրջանի բնակիչների:

4.6.2 Մոնիտորինգի անցկացմանը մասնակից յուրաքանչյուր սուբյեկտի համար նպատակահարմար է ամրագրել մոնիտորինգի որոշակի կոնկրետ

օբյեկտների ցանկ և հետազոտության սեփական թեմատիկ և առարկայական դաշտերը:

Մոնիտորինգի անցկացման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է կողմնորոշվել մոնիտորինգի իրավասության շրջանակներում, որպեսզի թույլ չտալ իրավասության սահմանների խախտում:

Սևանա լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման վերաբերյալ ամբողջական համալիր մասշտաբով իրականացվող մոնիտորինգի պարագայում հիմնական ուշադրությունը պետք է հատկացվի կառավարման գործընթացներում դրսևորվող ընդհանուր օրինաչափությունների վրա, բնակիչների իրավունքների պաշտպանության, էկոհամակարգի պահպանման ոլորտում զարգացման հնարավորությունների որոնումների վրա:

Էկոհամակարգի պահպանման գործընթացների մոնիտորինգ անցկացնող մասնակիցները պարտավոր են.

- ապահովել մոնիտորինգի առարկայի վերաբերյալ հավաստի և ներկայանալի տեղեկատվության հավաքում,
- ստացված տեղեկատվությունը պատկերել մեթոդական առաջարկներում ներկայացվող համապատասխան ձևով,
- մոնիտորինգի արդյունքների հիման վրա պատրաստել վերլուծական տեղեկանք էկոհամակարգի պահպանման գործընթացների իրական վիճակի, օրենսդրության նորմերի պահանջների կատարման և խախտումների մասին,
- տալ կոնկրետ և հիմնավորված առաջարկություններ էկոհամակարգի պահպանման գործընթացների կատարելագործման ուղղությամբ,
- մոնիտորինգի նյութերը ծրագրված ժամկետներում ներկայացնել համապատասխան գործադիր և օրենսդիր իշխանություններին, վերահսկողական և տեսչական մարմիններին, լայն հասարակությանը,
- մոնիտորինգի ընթացքում մասնակցել դրան առնչվող հանրային քննարկումներին և այլ միջոցառումներին:

4.7 Մոնիտորինգի հաշվետվության կառուցվածքը և բովանդակությունը

4.7.1 Էկոհամակարգի պահպանման գործընթացների մոնիտորինգի արդյունքների հիման վրա անհրաժեշտ է պատրաստել զեկույց: Զեկույցի հիմնական նպատակն է՝ լայն հասարակության իրազեկումը.

1) առաջին հերթին՝ ոլորտում իրական վիճակի մասին, ՀՀ օրենսդրության նորմերի կատարման և խախտումների իրական պատկերի մասին, այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների մասին, որոնք խոչընդոտում են ոլորտում գործուն, միասնական իրավական միջավայրի ձևավորմանը,

2) երկրորդ հերթին՝ առավել ակնառու և առավել տարածում գտած օրինախախտումների մասին,
3) երրորդ հերթին՝ այն միջոցառումների մասին, որոնք անհրաժեշտ են ձեռնարկել չեզոքացնելու համար այն գործոնները, որոնք խոչընդոտում են էկոհամակարգի պահպանման գործընթացների արդյունավետությանը և օրենսդրության նորմերի պահպանմանը:

Հաշվի առնելով մոնիտորինգի զեկույցի վերոհիշյալ հիմնական նպատակը՝ զեկույցի կառուցվածքը և բովանդակությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

Զեկույցի մոդելային կառուցվածքը

1) *Ներածություն*, որը ներկայացնում է զեկույցի նպատակը և այն կարևորությունը, որն ունի Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների արդյունավետությունը և ոլորտի օրենսդրական նորմերի կատարումը:
2) *Գլուխ I*, որը բացահայտում է Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների ռազմավարական կարևորությունը, ոլորտում օրինականության նշանակությունը, ինչպես նաև հանրապետական և տեղական գործադիր իշխանությունների դերը օրինականության պահպանման ապահովման գործում:
3) *Գլուխ II*, որը բացահայտում է էկոհամակարգի պահպանման գործընթացների մասնակից սուբյեկտների գործունեության հիմնական հանրագումարը, այդ թվում նրանց գործունեության դրական արդյունքներն ու թերությունները, ոլորտի օրենսդրական նորմերի պահպանման իրականությունը:
4) *Գլուխ III*, որը նկարագրում է էկոհամակարգի պահպանման գործընթացներում տիպային խախտումները, օրենսդրության նորմերի խախտումները, ինչպես նաև այն միջոցառումները, որոնք իրականացվում են դրանք վերացնելու ուղղությամբ:
5) *Գլուխ IV*, որը պարունակում է էկոհամակարգի պահպանման գործընթացների մասնակիցների գործունեության կատարելագործման գործնական առաջարկություններ, մասնավորապես, ուղղված ոլորտի օրենսդրության նորմերի պահպանմանը և կատարմանը:

Զեկույցի բովանդակությունը պետք է արտացոլի անցկացված մոնիտորինգի արդյունքները, պաշտոնական վիճակագրության տվյալները, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, իրավասու մարմինների հսկողական-վերահսկողական գործունեության արդյունքները, այլ հավաստի տեղեկություններ տվյալ հետազոտության օբյեկտի և առարկայի վերաբերյալ:

4.7.2 Զեկույցը, ինչպես նաև մոնիտորինգի նյութերը այնուհետև կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ իրենց զեկույցներում, ոլորտի զարգացման հայեցակարգային փաստաթղթերում, զարգացման ծրագրերում:

Էկոհամակարգի պահպանման օրենսդրության նորմերի բացահայտված խախտումների և դրանց պատճառների վերլուծության նյութերը պետք է ներառեն.

- տիպային խախտումների նկարագրությունը, դրանց կախվածությունը մասնակիցներից և նրանց փոխհարաբերություններից,
- խախտումների ի հայտ գալու պատճառները,
- խախտումների կանխարգելման և վերացման վերաբերյալ առաջարկություններ:

Էկոհամակարգի պահպանման ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետության կամ ոլորտի օրենսդրական նորմերի պահպանման մակարդակի բացահայտման նպատակով իրականացվող մոնիտորինգի զեկույցը կարող է ունենալ հետևյալ կառուցվածքը:

1) *Ներածություն*, որը ներկայացնում է զեկույցի նպատակը և Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտում ՀՀ օրենսդրության նորմերի անխտիր կատարման կարևորությունը:
2) *Մի քանի թեմատիկ հատուկ մասեր*, որոնք համապատասխանում են ոլորտի քաղաքականության ուղղություններին, կամ հսկողության և վերահսկողության ուղղություններին:
3) *Գործնական առաջարկություններ*՝ ուղղված ոլորտի քաղաքականության և կառավարման կառուցվածքային համակարգի կատարելագործմանը, ինչպես նաև ոլորտի օրենսդրության բարեփոխումներին:

Գործնական առաջարկությունները պետք է ընդգրկեն էկոհամակարգի պահպանման գործընթացների և ոլորտում գործող կառավարման մարմինների արդյունավետության բարձրացմանն ուղղված հիմնավորված կոնկրետ քայլեր:

4.7.3 Զեկույցը նպատակահարմար է ներկայացնել կազմված տպագիր տեքստով՝ համակարգչի վրա հավաքված, միջտողային տարածությունը՝ 1,5, թղթի չափը՝ A4, տառաչափը՝ 12, տառատեսակը՝ Sylfaen, պահպանելով հետևյալ դաշտերը. ձախից, վերևից և ներքևից՝ 2,5 սմ, աջից՝ 1,5 սմ:

4.8 Մոնիտորինգի կազմակերպման և անցկացման առաջարկություններ

4.8.1 Քանի որ էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի առկա փորձը համեմատաբար մեծ չէ, իսկ նրա անցկացման տեսական և մեթոդական հիմքերն անհրաժեշտ են ստուգել և փորձարկել՝ նպատակահարմար է նախապես մոնիտորինգ անցկացնել անմիջական ազդեցության գոտում գտնվող մեկ համայնքի կամ մեկ բնակավայրի վարչական

տարածքի սահմաններում: Ընդ որում, նշված փորձնական տարածաշրջանի ընտրությունը պետք է կատարել այնպես, որ մոնիտորինգի ընթացքում ստացված տեղեկատվությունը լինի ներկայանալի, այսինքն՝ բավականաչափ ճիշտ արտացոլի ընդհանուր օրինաչափությունները, էկոհամակարգի պահպանման գործընթացների պրակտիկան, իր դրական և բացասական դրսևորումներով:

4.8.2 Նշված ներկայանալի տեղեկատվությունը ստանալու համար, որպես հետազոտության հնարավոր օբյեկտ կարող է ծառայել էկոհամակարգի պահպանման գործընթացների առկա պրակտիկան փորձնական բնակավայրում (*տարածաշրջանում*):

Փորձնական տարածաշրջանի ընտրության ժամանակ, որտեղ էկոհամակարգի պահպանման գործընթացների առկա պրակտիկան ենթակա է մոնիտորինգի, ցանկալի կլինի հաշվի առնել հետևյալ գործոնները.

- էկոհամակարգի բարվոք և ոչ բարվոք վիճակում գտնվող բաղադրիչների (*օրինակ. ջրային մարմինների, անտառային տնկարկների և այլն*) առկայությունը,
- էկոհամակարգի պահպանման և օգտագործման ոլորտում մասնագիտացված ընկերության, ինչպես նաև պետական վերահսկողական ստորաբաժանման առկայությունը,
- էկոհամակարգի պահպանման օրենսդրության կատարման պրակտիկան շատ չի տարբերվում Սևանա լճի ընդհանուր ջրահավաք ավազանի միջինից:

4.8.3 Նպատակահարմար է անցկացնել մոնիտորինգի նյութերի հավաքման և ընդհանրացման մեթոդական առաջարկների նախնական փորձաստուգում: Դրա համար անհրաժեշտ է ընտրված փորձնական տարածաշրջանում անցկացնել էկոհամակարգի պահպանման գործընթացների պրակտիկայի մոնիտորինգ, ինչպես նաև ուսումնական սեմինար մոնիտորինգ իրականացնող մասնակիցների համար:

Մեթոդական առաջարկների փորձաստուգման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է հատկացնել ոչ միայն իրավական և նորմատիվային դրույթների կատարման վերաբերյալ նյութերի ընդհանրացմանը, այլև մարդկանց իրավագիտակցության մակարդակի բացահայտմանը, էկոհամակարգի պահպանման գործընթացների մասնակից կառույցների և բնակիչների վերաբերմունքի բացահայտմանը այս կամ այն օրենսդրական դրույթի կատարման նկատմամբ: Դա իրականացվում է հետազոտության սոցիոլոգիական մեթոդների միջոցով:

Ընդհանրացումը պետք է իրականացվի մաթեմատիկական և վիճակագրական վերլուծության գործիքների կիրառմամբ: Ընդ որում, անհրաժեշտ է ներգրավել

անկախ փորձագետներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մեթոդական առաջարկների փորձաստուգման գործընթացում հիմնական ուշադրությունը ենթադրվում է հատկացնել.

- էկոհամակարգի պահպանման և պահպանման նկատմամբ վերահսկողության գործընթացներում խախտումների բացահայտման կարողությանը,
- այլ խախտումների բացահայտման, ինչպես նաև բացահայտված խախտումների ըստ տիպերի դասակարգման հնարավորությանը,
- ոլորտում առկա իրավախախտումների տիպերի և շահերի բախման երևույթների ճիշտ տեսակավորման հնարավորությանը,
- երաշխավորվող մեթոդների հնարավորությանը՝ առավելագույն ամբողջական ձևով բացահայտելու էկոհամակարգի պահպանման գործընթացների իրական պրակտիկան, այդ գործընթացներում իրավախախտումները, ճշտորեն որոշելու դրանց էությունն ու ի հայտ գալու պատճառները,
- երաշխավորվող մեթոդների հնարավորությանը՝ տվյալ մոնիտորինգի նպատակների համար հաշվի առնելու բոլոր նշանակալից տեղեկություններն ու փաստերը:

4.8.4 Մոնիտորինգ իրականացնող մասնակիցների համար անցկացվող սեմինարին կարելի է հրավիրել նաև այլ տարածաշրջանների բնակավայրերի համապատասխան մասնագետների: Սեմինարի ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է քննարկել էկոհամակարգի պահպանման պրակտիկայի և ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխանության հարցերը, ինչպես նաև լսել կարծիքներ և գնահատականներ մոնիտորինգի մեթոդական առաջարկների արդյունավետության վերաբերյալ, հատկապես օրենսդրական նորմերի կատարման և իրավախախտումների մասին նյութերի հավաքման և ընդհանրացման առնչությամբ:

4.8.5 Հաշվի առնելով մեթոդական առաջարկների փորձաստուգման արդյունքները, հնարավոր կլինի ծրագրել *մոնիտորինգի հետազոտության հաջորդական փուլերը.*

- մոնիտորինգի անցկացման և արդյունքների ամփոփման ընդհանուր մեթոդաբանության մշակում,
- էկոհամակարգի պահպանման գործընթացների պրատիկային առչվող տեղեկատվության տրամաբանական վերլուծություն, իրավախախտումների բացահայտում, դասակարգում,
- ոլորտի գործընթացների բարելավման, իրավախախտումների պրակտիկայի կանխարգելման և վերացման առաջարկությունների մշակում,

- անցկացվող մոնիտորինգի առարկայի, ինչպես նաև մոնիտորինգի կազմակերպման և անցկացման մեթոդաբանության վերաբերյալ էկոհամակարգի պահպանման ոլորտի բարձրակարգ մասնագետների կարծիքների ուսումնասիրություն և ընդհանրացում,
- մոնիտորինգի զեկույցի կառուցվածքի և բովանդակության մշակում:

Նկար 2. Գիհուտ Սևանա լճի արևելյան ափին

5. ՀԱՎԵԼՎԱԾ

ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

5.1 Էկոհամակարգի պահպանման և օգտագործման տնտեսական և սոցիալական արդյունավետության գնահատումը

Էկոհամակարգի պահպանման և օգտագործման մարմինների գործունեության արդյունավետության գնահատման մեթոդական ապահովումը իր մեջ ներառում է հատուկ մշակված հարցազրույցի և հարցախույզի ստանդարտ հարցաթերթեր և ձևաթղթեր տեղեկատվության հավաքման և ընդհանրացման նպատակով, այդ թվում.

- ղեկավարների, տեխնիկական անձնակազմի, սպասարկող անձնակազմի հետ հարցազրույցների հարցաթերթ,
- հաստիքային աշխատողների քանակի, որակավորման և գործունեության նկարագրության ձևաթղթեր,
- աշխատակիցներին փաստացի վճարված աշխատավարձի հաշվառման ձևաթղթեր,
- կառավարվող, սպասարկվող տարածքների էկոհամակարգային բնութագրերը, տարածքի վերաբերյալ հիմնական քանակական և որակական տվյալները, էկոլոգիական խնդիրներն ու ռիսկերը, դրանց առնչվող փաստերն ու թվերը,
- ֆինանսական միջոցների օգտագործման վերլուծության ձևաթղթեր:

Էկոհամակարգի պահպանման և օգտագործման արդյունավետության գնահատման համար բավարար չէ սահմանափակվել միայն տնտեսական ցուցանիշներով: Տնտեսական արդյունավետությունը պետք է լրացված լինի սոցիալական արդյունավետության ցուցանիշներով:

Էկոհամակարգի պահպանման և օգտագործման սոցիալական արդյունավետությունը հասկացվում է որպես քաղաքացիների համապատասխան պահանջների բավարարվածության մակարդակը: Սոցիալական արդյունավետությունը չափվում է քաղաքացիների կողմից էկոհամակարգի պահպանման ծառայություններին տրված գնահատականների միջոցով:

Սոցիալական արդյունավետությունը, որպես քաղաքացիների գնահատականների համակարգ, իր մեջ ներառում է ցուցանիշների 5 տեսակ.

1) *էկոհամակարգի պահպանման առանձին ուղղությունների մասնավոր գնահատականներ*,
2) *էկոհամակարգի պահպանման հանրագումարային գնահատականներ*, որոնք իրենցից ներկայացնում են էկոհամակարգի պահպանման,

վերականգնման ծառայությունների կողմից իրականացվող, էկոհամակարգի պահպանմանը, վերարտադրմանը և բնականոն զարգացմանը նպաստող. գործընթացների արդյունավետության մասնավոր գնահատականների միջին արժեքը,

3) *քաղաքացիների բողոքարկման մակարդակը և բողոքների բնույթը*: Բողոքարկման մակարդակը իրենից ներկայացնում է տարբեր տեսակի բողոքների քանակական հարաբերակցությունը՝ թաքուն բողոքների, դիմումների և ակտիվ բողոքների.
   - *թաքուն բողոքները* (*դեռևս չդրսևորված*) ցույց են տալիս էկոհամակարգի պահպանման, վերականգնման, օգտագործման ոլորտում տարբեր հիմնախնդիրների առկայությունը, որոնց մասին բնակիչները տեղյակ են, բայց այդ առիթով դեռևս չեն դիմել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, տեսչական և այլ մարմինների (*բացահայտվում է բնակիչների շրջանում հարցախույզի և հարցազրույցի միջոցով*),
   - *դիմումներ*՝ դա քաղաքացիների կողմից պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացված պահանջ-հայտ է էկոհամակարգի պահպանման, վերականգնման համապատասխան ծառայություններ իրականացնելու վերաբերյալ, ինչը նախատեսված է օրենսդրորեն,
   - *ակտիվ բողոքները* ներառում են քաղաքացիների դիմումները վերադաս մարմիններին, պետական տեսչություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին՝ էկոհամակարգի պահպանման, վերականգնման, օգտագործման ոլորտում առկա խնդիրների առիթով:

   Բողոքների բնույթն իրենից ներկայացնում է բողոքների դասակարգումը ըստ էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման ուղղությունների և կառավարման գործընթացների նկատմամբ պահանջների,

4) *քաղաքացիների դիմումների կատարման արդյունավետությունը*, որը ցույց է տալիս ստացված դիմումների ամբողջ քանակում կատարված դիմումների բաժնեմասը և դրանց ժամանակին կատարված լինելը,

5) *քաղաքացիների բավարարվածությունը*, որը ցույց է տալիս այն քաղաքացիների քանակը, որոնք ընդհանուր առմամբ բավարարված են էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման առկա վիճակով: Ի տարբերություն սոցիալական արդյունավետության մյուս ցուցանիշների, այս ցուցանիշը իր մեջ պարունակում է էկոհամակարգի պահպանման ոլորտում իրականացված ընդհանուր՝ համալիր փոփոխությունների նկատմամբ բնակիչների վերաբերմունքը:

5.2 Էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման մարմնի (այդ թվում՝ կապալառու ձեռնարկության) գործունեության արդյունքների գնահատումը

Աղյուսակ 1. էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման մարմնի գործունեության արդյունքների գնահատման մեթոդական աղյուսակ

Ձեռնարկության անվանումը _____

Ձեռնարկության կողմից կառավարվող, սպասարկվող տարածքները

- *տեղամասերի անվանումները* _____
- *ընդհանուր տարածքը, հա* _____

Հ/հ	*Գնահատականի ցուցանիշները* *«գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «վատ»*	*Գնահատման չափորոշիչները*
1		Կառավարվող, սպասարկվող տարածքների էկոհամակարգային բնութագրերը, վիճակը. հիմնական քանակական և որակական տվյալները, առկա մարտահրավերները, էկոհամակարգի վրա ճնշումները, բարելավման համար անհրաժեշտ գործողությունները, էկոլոգիական խնդիրներն ու ռիսկերը, դրանց առնչվող փաստերն ու թվերը: ▪ սկզբնական մակարդակը (*մինչ տվյալ կառավարման մարմնի կառավարման տակ անցնելը*), ▪ մեկ (*երկու, հինգ, տաս…*) տարի անց:
2		Քաղաքացիների բավարարվածությունը էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման աշխատանքների որակով. ▪ քաղաքացիների ակտիվ բողոքների քանակը, ▪ քաղաքացիների ընդհանուր բավարարվածությունը այդ ոլորտի բոլոր ծառայություններից:
3		Սպասարկվող տարածքների պահպանման ներկա վիճակը. ▪ աշխատանքների կատարման նորմատիվային ժամանակացույցի առկայությունը և դրա պահանջների կատարումը, ▪ համապատասխան պայմանագրերի առկայությունը, ▪ պլանային ստուգումների ժամանակին կատարումը, ▪ սպասարկման գործընթացների անվտանգությունը, ▪ համապատասխան սարքավորումներով հագեցվածությունը, ▪ սպասարկվող տարածքներում էկոհամակարգի հիմնական բաղադրիչների, կենդանի ու անկենդան

		ենթահամակարգերի էկոլոգիական բնութագրերը և վիճակը, դրանց հետ կապված խնդիրները, դրանց վրա ազդող հիմնական գործոնները, ռիսկերը, հիմնախնդիրների պատճառները, ինչպես նաև սպասարկվող տարածքների սանիտարական վիճակը:
4		Կապալառուների աշխատանքների դիմաց ժամանակին վճարելը՝ կատարված աշխատանքների քանակին և որակին համապատասխան. ▪ պայմանագրային պայմաններին հետևելը, ▪ տույժերի կիրառումը աշխատանքների որակի և ժամկետների խախտման համար:
5		Վարձու կամ գնվող աշխատանքների, վարձակալման, տեխնիկական սպասարկման պայմանագրերով սահմանված պայմանների կատարումը և արդյունքների արձանագրումը:

5.3 Էկոլոգատնտեսական քաղաքականության նպատակների և սկզբունքների համապատասխանության որոշումը Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտում

Աղյուսակ 2. Էկոլոգատնտեսական քաղաքականության նպատակների և սկզբունքների համապատասխանության որոշման (Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ոլորտում) աղյուսակ-ուղեցույց

Սկզբունք	***Նպատակ***
1. Մարդկանց ներկա և ապագա սերունդների կարիքների բավարարումը շրջակա միջավայրի պահպանման և զարգացման ոլորտում:	Սևանա լճի էկոհամակարգի վերականգնումը, վերարտադրման, բնականոն զարգացման և բարվոք վիճակի ապահովումը:
2. Շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ որպես հասարակության զարգացման անբաժան մաս:	Սևանա լճի էկոհամակարգի ընդգրկումը երկրի և առանձին տարածքների տնտեսության կառուցվածքում, ջրահավաք ավազանի միկրոկլիմայի և սանիտարահիգիենիկ վիճակի բարելավումը:
3. Բնության և հասարակության միասնության սկզբունքը:	Բնապահպանական գաղափարների համակցում տնտեսական և իրավական համակարգերում, ինչը կապահովի էկոլոգիական պահանջների հաշվի առնելը ընդհանուր զարգացման քաղաքականության տարբերակների ընտրության մեջ:
4. Հանրային շահի գերակայության ապահովումը մասնավորի նկատմամբ:	Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի տարածքներում էկոլոգիապես մաքուր և անվտանգ տեխնոլոգիաների, այդ թվում՝

	կենսատեխնոլոգիաների պարտադիր կիրառում ապահովելը:
5. Հասարակության մասնակցության գերակա դերը հասարակության և բնության միասնականության մեջ:	Էկոհամակարգի ակտիվ պահպանումը, վերահսկումը, օգտագործումը և հանրության ներգրավումը որոշումների կայացման մեջ, Սևանա լճի ջրավազանային տարածքում և դրանից դուրս գտնվող ազդեցության գոտիների տարածքային կազմակերպման մեջ:
6. Անտառների ընդլայնման գործընթացի իրականացումը որպես շրջակա միջավայրի վերարտադրության պայման:	Սևանա լճի ջրահավաք ավազանի և դրանից դուրս գտնվող ազդեցության գոտիների անտառապատման աշխատանքների ֆինանսավորման առաջնայնության մակարդակի բարձրացումը:
7. Բնության հարստության և դրա փոփոխության ընթացքի հաշվառում:	Սևանա լճի և ջրահավաք ավազանի մակերևութային և ստորերկրյա ջրերի, տարածքի անտառների, էկոհամակարգի այլ բաղադրիչների հաշվառում, գույքագրում և գնահատում, դրանց վիճակի մշտական մոնիտորինգ:
8. Տնտեսական գործունեության իրականացման օրինականությունը:	Սևանա լճի էկոհամակարգի հետ առնչվող պայմանադիր կողմերի միասնական իրավական դաշտի ստեղծում, բարենպաստ շրջակա միջավայրում բնակվելու մարդու իրավունքների պաշտպանություն:
9. Բնօգտագործումը վճարովի լինելը և շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցումը:	Բնօգտագործողների պատասխանատվության կարգի ընդունում, տնտեսական մեխանիզմի ստեղծում, որն ուղղված է Սևանա լճի էկոհամակարգի պահպանությանը, վերարտադրությանը և վերականգնմանը:
10. Բնապահպանական միջոցառումների արդյունավետություն:	Սևանա լճի էկոհամակարգի պահպանման և վերականգնման աշխատանքների միավործախսերի հնարավորինս նվազեցում՝ ոչ ի հաշիվ աշխատանքների որակի և քանակի:
11. Տեղական կապալառու և արտադրական ձեռնարկությունների գործունեության խթանում:	Սևանա լճի էկոհամակարգի պահպանման հետ կապված կազմակերպությունների շահագրգռվածության բարձրացում իրենց աշխատանքի արդյունքների մեջ:
12. Էկոլոգիական տեղեկատվության թափանցիկության ապահովման սկզբունքը:	Հասարակության համար տեղեկատվության ազատ հասանելիությունը էկոհամակարգի պահպանման և վերականգնման աշխատանքների ոլորտում կատարված ծախսերի վերաբերյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենք
- «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենք
- ՀՀ Ջրային օրենսգիրք
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնարար դրույթների մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք
- «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
- «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր» (*CEPA*)
- Հայնախագիծ ԲԲԸ. Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագիծ, Երևան, 2013թ.
- «Հանուն ԿՄՋ» ասոցիացիա/UNEPCom.Интегральная оценка экологического состояния озера Севан, Երևան, 2011թ.
- Г.Г. Матишов и др.Современное состояние и проблемы изучения озера Севан, 2016г.
- Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում ռեկրեացիոն, լանդշաֆտային, առողջարանային համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման նախագիծ. քաղաքաշինական կանոնադրություն. քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչներ, Երևան, 2011 թ.
- «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն, ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշում
- Ջրային կոմիտեի կանոնադրություն. ՀՀ Ջրային կոմիտեի կայք. https://www.scws.am/
- «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. Սևանա լճի ջրային հաշվեկշիռները. տարեկան, ամսական
- «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. Սևանա լճի ջրի որակի մոնիտորինգի արդյունքները
- Առավոտ, Առկա են զգալի բացեր «Սևանա լճի մասին» օրենքի ենթաօրենսդրական դաշտում. https://www.aravot.am/2021/03/18/1178324/
- Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծ, Երևան, 2011թ. Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 10-ի նիստի N 22 արձանագրային որոշման
- Սևանի ջրավազանային կառավարման պլանի նախագիծ,ԵՄ Ջրային նախաձեռնություն պլյուս Արևելյան գործընկերության երկրների համար (*ENI/2016/372-403*), հոկտեմբեր, 2020թ. https://euwipluseast.eu/images/2021/01/PDF/Draft_Sevan_RBDMP_Final_Report_ARM_final_180121.pdf

- Գետավազանային կառավարման պլան. Սևանի ջրավազանային կառավարման տարածք, Եվրոմիության ջրային նախաձեռնություն՝ Արևելյան գործընկերության համար EUWI+ https://www.euwipluseast.eu/images/2019/05/PDF/AM_Sevan_Factsheet__ARM.pdf
- ԵՄ Ջրային նախաձեռնություն պլյուս Արևելյան գործընկերության երկրների համար. Երկրորդ հանրային իրազեկում
- Կառավարման պլան. Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների. https://www.e-draft.am/projects/4442/about
- ՀՀ վիճակագրական ծառայության պաշտոնական կայք. http://www.armstat.am
- Գեղարքունիքի մարզի և համայնքների զարգացման ռազմավարություն, մարզի պաշտոնական կայք. http://gegharkunik.mtad.am
- Եվրոպական Միության կողմից Եվրոպայի ջրային մարմինները գնահատելու համար «Ջրի շրջանակային դիրեկտիվ». http://www.eea.europa.eu/data-and- maps/data/ecoregions-for-rivers-and-lakes
- ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի նորմերը՝ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի Սևանա լճի ջրերի որակի նորմերը» N 12.1 հավելված
- Ազգային զեկույցներ. http://www.mnp.am/mijazgayin-hamagorcakcutyun/azgayi-zekuycner
- «Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների և դրանց կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգ» մեթոդական ձեռնարկ, «Երրորդ բնություն» ՀԿ, Գյումրի, 2014թ.
- Խաչատրյան Ա.Ս. Անտառների կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի մեթոդական ձեռնարկ, Գյումրի, 2022թ.
- ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»
- ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»

Ռաֆայել Մխիթարյան

Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործընթացների հանրային մոնիտորինգի մեթոդական ձեռնարկ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԵՄ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը հետամուտ է ԱԼԳ ծրագրերի իրականացմանը, հասարակության բոլոր շերտերի մասնակցության և տեղեկացվածության ապահովմանը, ժողովրդավարական բարեփոխումների հետևողական իրականացմանը:

eapcsfarmenia@gmail.com

https://eap-csf.am/hy/

Գյումրի, 2023